**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-1/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 18.05.2018թ.
ժամը 14 ³⁰

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան.
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԵՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան,
ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյան,
ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-1/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովինիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակիցների՝ բաց ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնացին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**1. Մասնակցի՝ բաց ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-1/1»** ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին՝ **«Կոմպմարկետ» ՍՊԸ**-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են, սակայն երկայացված տեխնիկական բնութագրում նշված չէ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող 2 PCI slot-ի առկայությունը: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը պահանջելով շտկել անհամապատասխանությունը:

***Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:***

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**21.05.2018թ. գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.**
Սահմանված ժամկետում **«Կոմպմարկետ»** ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց անհամապատասխանության շտկված տարբերակը, որը ընդունվեց գնահատող հանձնաժողովի կողմից:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-1/1»** ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի պահանջներին և 1-ին չափաբաժնում **«Կոմպմարկետ»** ՍՊԸ-ին հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս հետ կնքել պայմանագիր:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-1/1»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-1/1»** ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

| | |
|---|---|
| **Գնահատող, (ԳԱՊ)** | Տ. Մաթևոսյան |
| **Գնահատող** | Ի. Զադոյան |
| **Գնահատող** | Խ. Երիցյան |
| **Գնահատող** | Հ. Բարսեղյան |
| **Գնահատող** | Կ. Բրոսյան |
| **Գնումները համակարգող՝** | Ա. Բաղրամյան |